



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
 և Կրթատարակուիամէն Ծարաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ - - - - Խմբագիր

ԲԱԺԱՆՈՐԳՅԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑՆԱԿ ԵՄԱՆՄԱՅ ՈՒ - - - - **ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ**
ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ - - - - **ՀԱՄԱՐ**

Տարեկան	1 50	Տարեկան	10 Քրտնք.
Վեցամսեայ	75	Բաժանորդագրինն կԱՆՍԻԿ	
Եռամսեայ	40	Վճարելի է միշտ:	

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
 To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՄՍՐՏ 11, 1899.

ՄԻՆԵՐ ԻՆՉՊԷՍ Կ'ԸՄԲՈՒՆԵՆԻՔ ԲՆԱՄԱՏՈՒԹԻՒՆԸ

ՄԻՆԵՐ ԻՆՉՊԷՍ Կ'ԸՄԲՈՒՆԵՆԻՔ ԲՆԱՄԱՏՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս ընտանեաց մէջ բացարձակ բարի բան չկայ, երկարակամութիւնը, անձրեւը, հովը, կրակը և այլն զանազան պարագաներու մէջ կուենան իրենց տարբեր արդիւնքները—օգտակար կամ վնասակար— անտեղի ալ քննադատութիւնը բացարձակօրէն օգտակար և բացարձակօրէն վնասակար չենք կրնար համարիլ. անոր արդիւնքին որպիսութիւնը կարողանաւ որչափ զայն կիրառելու ոգիին, համարութեան, պատեհ կամ անպատեհ ըլլային:

Բնագաղտութիւնը շատ անգամ չփոխուած է իրեն նոյնաձայն եղող քննադատութեան հետ. ստէպ անտեսած է որ քննադատութեան նուիրականութիւնը որբարդուած է բաները կանխակալ ատելութիւնով մը, սխալ մը, քէնով մը դատելով, և այդ պարագային է որ օրհնեալ երկարակամութիւնը կայծակ կըլլայ և մահ կը սրբէ իւր շուրջը. բարեկէր անձրեւն ուերիչ հեղեղ կը դառնայ, զուգարար և կազդուարիչ զեփուած խորշակարար սրբ կամ կործանարար փոթորիկ կը հանդիսանայ, կենարար հուրը դժոխտանիլ հրդէհի կը վերածուի. այսու ամենայնիւ՝ այս ամենը իրեն բարի են: Ինչպէս հրդէհին պատճառաւ կրակը իր օգտակարութիւնը մազի շափ չի կորսնցունիր մեր աչքի առջև, անտեղի ալ քննադատութիւնը՝ իր անպատեհ կամ ապօրէն գործածութեամբը՝ մեզի համար սկզբունքով սուրբ ու փրկարար ըլլալէ չը դադարիլ. նա՛ այն լուսատու ջահն է, որոյ առջև կը հարածուին խաւարին իշխանութիւնները և նենգութիւնները, և որ մեզ կ'առաջնորդէ բարուքման ու բարգաւաճման ճշմարիտ ճանապարհներէն:

Արդ մեզ կը մնայ գիտնալ թէ՛ ինչպէ՛ս քննադատելու ենք, որ փոխանակ վնասակար ըլլալու, օգտակար ըլլանք:

Երեսու ցրենի արտին ու անոր մէջ սերմանուած որմին առակովը բացատրեց թէ՛ իմաստութեան և խոհականութեան հակառակ է ճշմարտութիւնը ոտնակոխ ընել՝ երբ կը տեսնուի թէ անոր հետ խառնուած է խաբարայտութիւնը: Քանի որ մարդկային ընկերութիւնը իր խաղաղին հետած չէ, պէտք է որ անոնք երկուքը մէկտեղ աճին, մինչև որ օրը զանոնք զատէ իրարմէ՛: մին ամբարուելու և միւսը այրուելու համար. և այն օրը՝ ժողովրդի զիտագուցութեան հասնելու օրն է. այն գիտակցութիւնը, որը թէ՛ կարող է և թէ՛ արամադիր է ճշմարտութիւնը ստույթներէն, բանաւորն անբանաւորէն և օգտակարն վնասակարէն որոշելու:

Որպէս զի մենք ազատ պահենք ինքզինքնիս քննադատութիւնը որբարդելու շարիքէն, հետեւեալ սկզբունքները միշտ աչքի առջև պիտի ունենանք, խոստովանելով միտնգամայն թէ՛ երբէք չենք յաւակիր կարծելու որ մենք անտալ պիտի ըլլանք մեր բոլոր տեսութիւններուն մէջ, և պիտի համապատասխանենք, ճիշդ ու ճիշդ՝ քննադատութեան ճշմարիտ բարձրութեանը:

Ամեն բանէ առաջ, ո՛ր և է քննադատութեան ձեռնարկելու առեւն, սկզբունքը միայն ինկատի պիտի ունենանք. անոր խոխաղով յափշտակուած՝ մեր սահմաններէն բոլորովին դուրս պիտի համարինք ամեն անձ կամ անձնական խնդիր:

Ոյոս պիտի ասեմք ո՛ր և է զձեռք, անշահ ու անպատեհ խնդիրներ յարուցանելէ. չ'պիտի թող տանք որ ՏԻԳՐԻՍը գրպանի թաշկինակ ըլլայ անոնց, որոնք կիրքի կամ մոլեռանդութիւններու հաշիւներ կուզեն մաքրել:

Միշտ աչքի առջև պիտի պահենք ու ճշմարտութիւնը թէ՛ կիրքը, ըլլայ սէր, ըլլայ ատելութիւն՝ կ'ՈՅՐ է: Ուստի՛ մի գուցէ շատ անգամ՝ քննադատութիւն կընենք ըսելով՝ մտեթի մէջ խորխորեց ու մոլորեց և մոլորուենք. պիտի ջանանք ամեն խնդրոյ վրայ անհաճադարձ և օտարմէկի մը պաղարկելու ինչովը նայելու: Անշուշտ մենք ալ շատերու պէս կիրքի ենթակայ մարդեր ենք,

սակայն հրատարակագրութեան մէջ չենք կրնար ինքզինքնու թոյլ տալ որ վարուինք ու վերաբերուինք այնպէս՝ ինչպէս պիտի ընէինք իրրե անհատներ: Մենք համոզուած ենք որ լրագիր մը միայն այն ատեն ժողովուրդին շահերուն նուիրուած կըլլայ, երբ կը ներշնչուի ու կը վարուի մեծ հոգիէ մը — ժողովուրդին, ազգին ու հայրենիքին սգովը: Այսօր մեր ժողովուրդը, մեր ազգը, մեր հայրենիքն առաւել քան երբէք սուրբ, վսեմ, ջերմ ու հզօր ներշնչարան դարձեր են, և այդ ներշնչութեան տակ է որ մենք կը բազմանք մեր դուզնաբեայ ծառայութիւնն մասուցանել Ամերիկայի Հայ ժողովուրդին:

Քննադատութեան մէջ՝ բարեխոսութիւն և յոռեանսութիւն՝ երկու հիւանդոտ ծայրայեղութիւններ են. մի՛ն՝ թոյլ ու միւսը սենդոտ:

Մենք պիտի ջանանք բարեխոսն արամադրութիւնով մը քննել ու դատել ամեն խնդիր: Ոչ այնքան բարեանս պիտի ըլլանք որ համակերպութիւններու սարկութիւնով կաշկանդենք մենք զմեզ, ոչ ալ այնքան յոռեանս՝ որ ամեն ինչ ոտնակոխ ընելու, անարգելու և արհամարհելու յաւակնութեանը հասնինք:

Մենք համոզուած ենք թէ ո՛ր և է քննադատութիւն որ չը շինէր՝ կաւերէ անշուշտ: Ուստի նուիրական նկատուած բան մը քննելու ձեռնամուխ չպիտի ըլլանք, մինչև չ'համոզուինք որ կարող պիտի ըլլանք շինիչ և օգտակար արդիւնք մը յառաջ բերել: Չ'պիտի փորձենք խախտելու բան մը, որոյ սեղ ունիլ լուրը գնելու սպահովութիւնը չը պիտի ունենանք:

Մենք պիտի ջանանք որ մեր բոլոր քննադատութիւններուն մէջ մօր, հօր, կըրոր կամ քրոջ մը ոգին մեզ ներշնչէ և կառավարէ: Մեր քննադատութիւններու փուշերուն մէջ պէտք է բացաւ ուղղամտութեան վարդը, սրմէ միշտ բուրէ ազնիւ հոգի մը, զոհարար կեանք մը և բարեացակամ սիրտ մը:

Վերջապէս մեր քննադատութիւններուն մէջ՝ վճռական վերապահութիւնը հանրային կարծիքին պիտի տանք: Արեւին շողը, երկինքին ցօղն և սերմանուող սերմը, ամենն ալ հողին մայրական ծոցին մէջ կը զրկուին՝ անկէ բոյս, ծառ, ծաղիկ և պտուղ արտադրելու. անտեղի ալ մեր բոլոր տեսութիւնները, քննութիւններն ու գիտողութիւնները հասարակաց կարծիքին մէջ պիտի գրկախառնուին և անկէ՛ հանրային կարծիքին է որ բազմացուած արդիւնքն յառաջ պիտի բերեն՝ եթէ Հարազատ են, եթէ ճշմարիտ են, եթէ բանասեր են:

Ահա՛ թէ մենք ինչպէ՛ս կ'ըմբռնենք քննադատութիւնը:

ՏԻԳՐԻՍԻ ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպէս որ ՏԻԳՐԻՍԻ նախորդ թիւով ծանուցուած էր, ՏԻԳՐԻՍ ներկայ 70րդ համարով կըսկի հրատարակուիլ բոլորովին նոր ընկերութեան մը ձեռքով, և պարտաւոր կըզգանք յայտարարելու թէ:

Նախ՝ այս ընկերութիւնը ո՛ր և է ուղղակի կամ անուղղակի կապ չունի ո՛ր և է կուսակցութեան, Կոմիտէի կամ Մասնաճիւղի հետ, ըլլալով իստրովին անհատական ձեռնարկութիւն մը:

Երկրորդ. Ո՞ր և է կուսակցական նկատում շուենք և չենք կրնար ունենալ: Ամեն խնդրոյ վրայ պիտի նայինք անգային լայն տեսակէտով՝ առանց նկատելու թէ ո՞ր անձը կամ անձերը և ո՞ր կուսակցութիւնն կամ կազմակերպութիւնը կրնան շահիլ կամ վնասել մեր հրատարակութիւններէն, հերթ է որ խորին համոզում մը և գիտակցութիւն մ'ունենանք թէ՛ ազգին և ընդհանրութեան շահերուն կը ծառային անոնք:

Երրորդ. Մեր թիւերն իսպառ գոյ պիտի պահենք ո՛ր և է անձնական, անպատեհ, գժուած, անշահ և կրքոտ յորձակուաներու ու խնդիրներու առջև: Այո՛, մեր թիւերը բաց պիտի մնայ ժողովուրդին առջև. թիւերու կրնանք ըսել թէ աւելի բաց՝ քան երբէք. սակայն անկէ մ'անպիտիւր չըզրուենք: Բարեկաշա երկրպագուները պէտք է ըլլան՝ ներշնչուելով ազնիւ ու վսեմ զգացումներով միայն:

Չորրորդ. ՏԻԳՐԻՍԻ մէջ բացուած բոլոր կուսակցական և անձնական խնդիրները փակուած են:

Հինգերորդ. ՏԻԳՐԻՍը պիտի նուիրուի Ամերիկայի Հայ Գաղթականութեան ընկերական, բարոյական, մասուրական և նիւթական պահանջներուն ու շահերուն մասնաւորապէս և ազգային պարտականութիւններուն և բարեգործութեան ընդհանրապէս:

Վեցերորդ. ՏԻԳՐԻՍը երբեմն պիտի զբաղի նաև այն խնդիրներով, որ կը շահագրգռեն մարդկային ընկերութիւնը:

Եօթներորդ. ՏԻԳՐԻՍը հետամուտ պիտի ըլլայ իւր ընթացողները գիտակից պահելու Եւրոպական քաղաքականութեան՝ մասնաւոր շայկական խնդրի տեսակէտով:

Ընկերութիւնն մտադիր է ՏԻԳՐԻՍԻ ծաւալը մեծցունել մի քանի շաբաթէն:

Ասկէ ետք ՏԻԳՐԻՍԻն ուղղուելիք բոլոր գրութիւններ հետեւեալ հասցէով ըլլալու են:

Q. B. CHUTJIAN 145 East 23th St, New York City

ԳԻՏԵԼԻՔ

Հօնանի, Փարիզի և Պեռլինի նշանաւոր աստղագիտները վերջերս յաջողապէս յուսանկարով մը արեգակը մէջ 68000000 աստղ գտեր են:

Նոր գիտ մը զանուած է, որով մարդ ծովային հիւանդութեան չի բուժուիր: Նկատուած է որ ծովային հիւանդութիւնն յառաջ կուգայ որբիւնին զլուրի պարպուելով՝ ստամոքսին մէջ կուտակուելէն: Կարմիր արակիներով անոնց շինուած է, մէջը սնդիկ գնելով. երբ մարդը այդ կարմիր արակիներէն դուրս կը նստի, արիւնը գլուխը կըլլէ և հետեւաբար ծովային հիւանդութիւն չունենար:

Ռուս Կառավարութիւնը հինգերորդ Պատուիրանքին վրայ՝ իրրե բարեփոխում՝ յաւելում մը ըրած է. «Եւ պատուէ՛ իշխող սխալաբար ու հնազանդ է անոր» — Աստուածային ներշնչութեան հետ՝ այսպիսի լիբը վարուելը մը արքան ցաւալով՝ այնքան ալ մխիթարական է: Կ'երեւի թէ միապետները կ'զգան որ իրենց չափեկար իշխանութեան ճարը Աստուծոյ մտայն է:

Պուստայի մէկ ակում, որ վերջերս Սէյլան փոխադրուեցաւ, կ'արժէ 10,000 անգլ. լիբայ: — Այս հաշուով, Պուստայի բոլոր սակորներն ի՛նչ արժեւ են, կրնաք նէ հաշիւը հասնեցէք: Պուստայի կ'մտաք, որ սակորը ուսած է և զարդարուած թանկագին գոհարներով, կը դանուի Գանսիի Մահիլիով տաճարին մէջ:

Մարդուն մէկը արկածի մը հանդիպելով՝ ստիպմէ մը կը կարծնայ: Մարդը բժիշկներէն յուսահատուած կը դիմէ՝ « Բիրտոսէն — Գիտական » կոչուած բժշկող արիւնջ մը. արիւնջ իր ստաղին սղօթքը և արարողութիւնը կ'առաջնորդէ անոր՝ կ'ըստիպուի երկար ճամբարգութիւն մ'ընել, և կը խոստանայ մարդուն որ իր սղօթքը պիտի շարունակէ: Կարծեմ սաք իրապէս երկարիլ կ'ըստի՛ մինչև որ կը հուստարի միւսին. սակայն հող կանգ չ'առնէր, սակայն կը շարունակէ երկնալ. հիմայ մարդը եւր է իր սաքին համար սղօթի սղօթիկը գտնելու և անկէ ազաւելու որ ալ ևս զաղբեցունէ սղօթիկը, որպէս զի սաքը երկնալէ զաղբի, սակայն տակաւին գտած չէ այն արիւնջը, ու այդ մէկ սաքը կ'երկնայ...:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՍԻՍԻ

Ձէյթունի կարօտեցոյ ինպատարուելիք երկկայթի օրը վերջուպէս հասաւ և մ'ուսոյ 4ի Ծարաթ երկկայ Վերիք 20րդ մէջ ներկայացուեցաւ Մեծն Ներսէսի Ողբերգութիւնն՝ կատակերգութեամբ մը, որ թէ և ծանուցուած էր թէ՛ երգիտան պիտի լինէր, այլ՝ Ներսէսի մահուամբ հըրեշտակոց երգերուն տպաւորութիւնը չը խոսնաքարելու համար, այդ մասը ուղիղ կանխազգայմամբ մը զանց առնուած էր:

Գերասանական թուրք, որ լուսարամադրութեամբ օժտեալ արուեստասէր՝ այլ ո՛չ արուեստագէտ երիտասարդներէ կը բաղկանար, կանխազմեղ նոյն երկկայթի քննադատն որ ըսած էին, կ'երկի վստահ մեր անաչառութեան վրայ: Ընդունելիք այդ առաջարկը, զայս'անու որ ինչ որ ալ ըլլան մեր գիտողութիւնք ո՛չ ոք վշտանայ, այլ սակայ քաղաքավար և մտեբխական քննադատութեանց, որպէս ամեն քաղաքակրթեալ ազգերու մէջ հրատարակային մարդիկ կընեն: Կը խոստովանիմ թէ՛ ամենքն ալ քաղցր ժպտով մ'ընդունեցին մեր այս պայմանը. թէ՛

ի՞նչ պիտի ըսեն զայս կարգալէ յե-
տայ, կ'անգիտեմ:

Ժամը 7 1/2 ինչ հասանք հանդիսա-
վայրը, ժամը ճիշդ ծին պիտի ոկը-
սէր (գոնէ այնպէս էր ծանուցուած),
հանդիսականք խումբ խումբ կը հաս-
նէին, սրահը՝ որ խիտ ընդարձակ
կրնանք համարիլ մեր գաղութին թը-
ւոյն հետ բաղդատելով՝ լեցուեցաւ՝
հակառակ անձրևու օդին անյարմար-
ութեանը, բայց հանդիսականք Ձէյ-
թուերի կարօտելոց սատարելու եկած
ըլլաւ: Գոհունակութիւնն ունէին և
փոյթ չէին ըրած օդին հանգամանաց:

Սրահին մէջ ամեն կողմ կայտառ
գէժքեր կը նշմարուէին, շատեր կու-
տարածներէն ազատած ըլլաւ ներ-
քին ուրախութիւններն իրենց զիմաց
վրայ ալ որոշ ցոյց կուտային, իգա-
կան սեռն ալ ունէր իր ներկայացու-
ցիչները, բայց, գեղեցիկ սեռը, բա-
ցի մի քանի քերականական զարտու-
ղութեանց, բացակայ կը գտնուէր:
Համարժեքի ժամանակի հայ տիկին-
ները չը կային հոն, և եթէ սխալմամբ
այն երեկոյ Համարժեքի հանդիսին
ներկայ լինէր, անշուշտ պիտի պատ-
ուէր այն գեղեցիկ երեւոյթը, զոր
նուիրած է իր գործոց մէջ հայ տի-
կիններու շքանշանութեան նկարագրին:
Ս'ը էր սերմն գաղութին այդ մասը:

Սրահին մէջ վերնատան պէս յարկ
մը կար, որ օթեակի տնուեր կը կրէր
այս առթիւ: Ուստի վերնատանը շատ
մարդ չկար կրնանք ըսել: Մեծ ա-
ղաները բացակայ էին: Հանդիսակարգ
Յանձնախումբը խորհած չէր թէ ճշ-
բութեամբ կօշիկ, գլխարկ, կրկնա-
զգէտ այն հոլանդացի կրնան ունենալ եւ
այդ մասին ո՛ր է կարգադրութիւն
մ'ալ չէր ըրած՝ որպէս սովորութիւն
է, և որմէ նիւթական օգուտ ալ յա-
ռաջ կրնար գալ:

Ժողովուրդը անհամբեր կ'սպա-
սէր, ժամը ութը կ'անցնէր, բայց
սկսեալու նշոյլ մ'ալ չէր նշմարուէր:
Բացի վարագոյրի քովերէն հետաքր-
քիր դերասաններու քիւեր կը ցցուէին
մերթ ընդ մերթ:

Ընդամայն, ընդամայն, ընդամայն... Ի՞նչ
եղանք Տէր Աստուծոյ, կ'ըսէր մէկը,
այս ի՞նչ վայնասու՞մ է, ընդամենը կը
կրկնուէին հանդիսավայրի մէջտեղ,
անընդհատ ընդայն ուրիշ ճիշ մ'ալ
կը լուսէր հանդիսավայրին կից սրա-
հի մը մէջ: Թատրոնի մէջ այսպիսի
ձայներու անվարձ ակնհայտ մի քիչ
ուշադրութիւն ընել պարտաւորուե-
ցան՝ ճշդելու համար թէ՛ երախանե-
րու լալ ու կոծերն էին: Հանդիսա-
կաններէն ոմանք կը մտաւային. ո՞ր
ենք եղբայր, ո՞ր թատրոնի մէջ տես-
նուած բան է օրը խոյ ջոճուելով հան-
դիսականք ըլլալ: քովինը կըսէր, —
մ'աճապարէք, Պատըրի մէջ հրէից
թատրոնները ոչ թէ մի և նոյն բանը
կը տեսնեն, այլ շատեր թղթէ քուսկ-
ներով - փինջը- կուտեն և կեղեկներն
ալ գեղանք կը նետեն: Այս խօսքե-
րով պաշտպանել կուզէր մերկները:

Կրք միւս մը՝ մտաւով ցոյց տուաւ
փոքրիկ աղայ մը, որ պնակով մըր-
գեղէն կը վաճառէր հանդիսավայրին
մէջ: մօտերնին գտնուող Պօլսեցի մը
որ կը լսէր այս խօսակցութիւնը, ը-
տաւ, — և ու ալ պահ մը շուտեցայ
թէ ո՞ր ենք, միայն սուսամ հալուէ-
սի ծախող կինը կը պակսի, ինքզին-
քը՝ բողբոջին Պատմալին բարկիքը
կարծելու համար:

Այս պահուս անհամբեր հանդի-
սականք սկսան ծափահարութիւննե-
րով հասկցնել վարագոյրի ետե գըտ-

նուող պարտներուն թէ՛ ժամը 8 1/2
ալ անցած էր: Վերջապէս եօթ ան-
ձերէ բողբոջեալ երաժշտական Ի-
տալացի խումբը սկսաւ կտոր մը:
(Շարունակելի)
Տքթ. Թ. ԱՐՇԱԿՈՒՆԻ

Դերասաններու մասին եղած քն-
նադատութիւնները գալ թուով:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Անգլիոյ Փարլամենթին մէջ Ար-
տաքին Գործոց նախարարուղարը
պատասխանելով այն հարցին թէ՛ Ի-
րօ՞ք Բ. Գուռը հրաման զրկած է
տեղական իշխանութիւններուն որ
որտանցներէն ոմանք փակեն, որոնք
կը հոգացուն Անգլիական ու Ամե-
րիկեան նպաստներով: Ըսած է թէ
Բալուրի և Չիքոքսի որտանցներ փակ-
ուած են, Տիգրանակերտի որտերը ըն-
տանիքներու մէջ ցրուուած են, որոց
ծախքերը Ամերիկեան Միտիոնարները
կը հոգան: Ամերիկայէն զրկուած նը-
պաստներով: Նա վստահ չէ եղեր թէ
արդեօք Ձէյթուերի որտանցը տակա-
ւին բաց կը մնայ:

Բրիտանական դեսպանը Ի. Պօ-
լիս գորտուր գրումներ ըրած է ա-
սոնց մասին:

— Խարբերքի Հիւսէյնիկ գլխին
մէջ դեռատի հայ կին մը դանակով
սպաննուած դտեր են: Այս դժբաղդ
կողմ այրը Ամերիկայ կը գտնուի, ո-
րուն անուեր նաղարէթ թոթիկեան է:
— Խարբերքի Իլմէ գիւղին քովե-
րը հայ երիտասարդ մը վիրաւոր եւ
սպաննուած գտնուեր է:

— Հառովի Պապը ապաքինած է:

— Դեր ծովակալ Տուրի լման ծո-
վակալ հռչակուեցաւ Մ. Նահանգաց
ծերակուսին կողմէն: Պէտք է գիտ-
նալ թէ՛ Մ. Նահանգաց ամբողջ
պատմութեան մէջ միայն երկու լը-
ման ծովակալներ գտնուած են. ծո-
վակալ Ֆարլիսթ և ծովակալ Փո-
թըր: Ծովակալ Տուրի մահուանէն
ետքը այդ տիպոսը կը վերցուի,
մինչև որ կրկին Տուրի շափ ինք-
զինքը արժանաւոր հանդիսացնող
անձ մը երեւան գայ և պակուի
այդ փառաւորագոյն դարերով:

ԱՂԱՏ ԼՍՍՐԱՆ

Էլքս չօլ, Պրատուէյի և Չիքոքսի Փողոցի
անկիւնը, Նիւ Եորք:

Յառաջիկայ կիրակի երեկոյ ժա-
մը ճիշդ ծին Ազատ Լսարանի մէջ
պիտի խօսի Տքթ. Սիւնի. նիւթն է.
«Սնուելու ու առողջապահութիւն մար-
տազական գործարանաց»:
Վիճարանութեան նիւթն է. «Գի-
տութիւնը թէ՛ հարստութիւնը աւելի
օգտակար եղած է մարդկութեան»:

Վաղը Ուէսթ Հոպոքընի Լսարա-
նին մէջ պիտի խօսի Տքթ. Թ. Արշա-
կունի: Լսարանի ժողովը կակուի կէս-
օրէ վերջ ժամը ճիշդ 2 1/2 ին:

Ուէսթ Հոպոքընի եկեղեցւոյ շի-
նութեան Յանձնախումբն ալ կը ծա-
նուցանէ թէ՛ լսարանի ժողովէն վերջ
ընդհ. ժողով մը պիտի ունենայ, ուր
պիտի որոշուի վերջնականապէս եկե-
ղեցւոյ հողը գնուիլը:

ԱՂԴ

Տքթ. ձ. Հ. Մաթոսեան կը ծա-
նուցանէ թէ՛ իւր հին օփիսէն, որ
էր 122 Իսթ 28րդ Փողոց, տեղա-
փոխուած է 94 Լէքսինկթըն Աքիւր,
26 և 27րդ փողոցներուն մէջ. Ե. Ե.

ԱՐՄԷՆՈՒՀԻՈՅՆ ՕՐՐԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Կամար յօնքեր, կլոր երես,
Մերթ արտասուք մերթ ժպիտ ես.
Կարմիր այտեր, նրոէ բերան,
Երկինք աչացդ մէջ կերբան:

Հոգի անմեղ, ի՞նչ ես ասա՛,
Հրեշտակ, հիւրի կամ թէ՛ մուսա.
Ո՞ր աշխարհէն մեղ գաս այց տալ,
Ուստի՞ ուսար ժպիտ, խայտալ:

Սոսկ մի պաշիկ՝ այտերէդ վարդ,
Սոսկ մի հայեացք աչքէդ գուարթ.
Հօրքդ վրշաք, մօրքդ ցուեր,
Փոխեն ի խնդ սիրահարուէր:

Դեռ մանուկ ես, տատրակ սիրուն,
Դեռ անգիտակ՝ մեր ցուերուն.
Քո աշխարհն է տուն ու օրրան,
Մօրք սիրտը սիրոյդ խորան:

Կ'երազես միշտ, քուն թէ՛ արթուն,
Ո՞ր հոգեղէն կամ ո՞ր գուարթուն.
Արդեօք խոխանցդ շոյէ թերթեր,
Մինչ կը յաւես աչերդ յիթեր:

Արմէնուհի, խնդա՛, երգէ՛,
Ազատ՝ հոգէ՛, վշտէ՛, վէրքէ՛.
Կայտա՛, խայտա՛ և ծրծէ՛ կաթ,
Մօրք սիրով ջերմ, խանդակաթ:

Թող հրեշտակներ օրրանիդ շուրջ,
Հսկեն զքեզ՝ միշտ աշաւուրջ.
Մինչդեռ տաղունք, Լուսին, Արև,
Վառին, փայլին գլխիդ վերև:
Թրօյ. ՍՐԱՆ

ՉԱԻՆՇՏՍԱՍՈՒՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

(Գաւառական կեանքէ Աւսուած)
Եւ խիտ ծիծաղաշարժ երկու
Կատակերգութիւններ
Դերերէն յետոյ՝ Պար և Գաշնակ
Յառաջիկայ Շարաթ Երեկոյ,
Մարտ 18ին, ժամը ճիշդ 7 1/2 ին.
Ի Հըտտըն Բառնթի, Լէյպրը Կայրի-
իում կողիկ թատրոնային մէջ:
420 — 422 Spring St.
west Hoboken N. J.

Ուէսթ Հոպոքընի Հայ մանուկ-
ներուն Մայրենի լեզուի և ազգային
պատմութեան ուսուցման համար
հաստատուելիք ծաղկոցին ինպատո՛
Յանձնախումբն խիտ հրահանգիչ ու
զուարճալից հանգէս մը պատրաստ-
ած է, որուն կը հրահանգէր ըրոր ա-
նոնք՝ որք մեր մանուկները օտա-
րանալէ կուզին փրկել:
ՅԱՆՁՆԱՍՈՒՄԻ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԱՂԱՏ ԲՍՐՈՂ

Անցեալ կիրակի աւուր Ազատ
Բարոյի ժամանակը փոխուած՝ և
ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ ծանուցուած էր.
տակայն շատերը այդ յայտարարու-
թիւնը չը տեսնելով՝ սովորական ժա-
մանակին եկեր և ետ դարձեր էին,
այդ պատճառաւ ժողովը անգի չու-
նեցաւ: Յառաջիկայ կիրակի սովո-
րական ժողովարահին մէջ, որ է
19 Ուէսթ 27րդ Փողոց, Պրատուէյի
անկիւնը, էլքս չօլ, Տ. Գ. Չիթեան
պիտի քարոզէ նոյն նիւթին վրայ,
որ է «Մեր Պատասխանատուութիւն-
ները»: Բարոյը կ'ընկուի ժամը ճիշդ
11ին:

ՄԱՄԻԿՆԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՇՏԱՐԱՆ

24 և 26 Արշ Ըսթրիա, Ուսթըր

Այս յառաջնակարգ ճաշարանին
մէջ կշտանալու շափ առատօրէն շատ
համեղ ու ընտիր ճաշեր կուտանք,
և աղքատները ճրկ կը կերակրենք:
Այս ընթացքով միշտ շարունակելու
կարող եմ՝ շնորհիւ յաճախորդնե-
րուս: Մէկ փորձը բաւական պիտի
ըլլայ ամեն ոք գոհ ընելու:
Ողբերգ ըմպելիք արգելաւ է:

ՄԱՀԱԳՈՅԹ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Մահուան կոյր ու անողոք ման-
գալը՝ Ամերիկայի Հայ երիտասար-
դութեան ծաղիկներէն պատուական
ու խոստանալից կեանք մ'ալ քայցց՝
Ի սուգ և վրշա համակելով ո՛չ մի-
այս իր ազգակիցները, այլ և այն
հայ և ամերիկայի շրջանակները, ո-
րոց մէջ ապրած էր ինքը՝ Պ. Յովհան-
նէս Մ. Սիլիւստի (Տիգրանակերտցի):

Յիշեալը, որ իւր մահահանգուն
կնքեց 1899 Փետր. 8ին ի հասակի 29
ամաց, մի ուսումնական յաջող ըն-
թացք ուարտած էր Բողոքի բարձ-
րագոյն վարժարանին մէջ, ուր ամե-
նէն նկատուած էր իր մի օրինակե-
լի նկարագիր: Հոն՝ խիտ նախան-
ձայնքի ու ջանադիր եղած էր երի-
տասարդական կրօնական ընկերու-
թիւններ կազմելու և վարելու, իսկ
Ամերիկայի մէջ գալէն ետքը զգա-
լով որ Հայ երիտասարդութեան հա-
մար կենսական պարտականութիւն
մի է ազգային ուղղութեամբ գոր-
ծելը, մտաւ ազգային յեղափոխու-
կան կազմակերպութիւններու մէջ
և գործօն դէր կատարեց: Սուս ան-
դամակցած էր «Հայկազեան» ընկե-
րութեան. և երբ այս ընկերութիւնը
միացաւ Վերակազմեալ Հնչ. Կու-
սակցութեան հետ, ինքն ալ մտաւ
Սէյլիմի Հնչ. Մասնաճիւղին մէջ,
ուր շատ նախանձայնքի ու գոր-
ծունեայ կեանք մը վարեց:

Ուղղամտութիւնը Պ. Սիլիւստի
կեանքին զեկավարն էր, և ամբողջ
կեանքը մեքենակալ կանոնաւորու-
թիւն մը կը ներկայացունէր: Կանո-
նաւոր արձանագրութիւն պահած է
թէ իր հաշիւներուն և թէ թղթակ-
ցութիւններուն համար՝ խիտ նրբին
մանրամասնութիւններով:

Իր խոկումներու մասին երկու
նմուշ կ'անենք իւր յաշտատերէն,
հիւանդութեան անկողինը մանեկէն
երկու օր առաջ գրուած է «Կեանքը
յաւրանականին մէջ վերջացող պը-
պըջակ մը չէ, այլ նա իրանդաւառու-
թիւններու գեղարքով կը հոսի գէպի
յաւերժական երազները»: կըսէ նաև
«Մանկութեան օրե՛ր, ի՞նչ քաղցր
յիշատակ...»

Կուգար սրորեկ զիս՝ անկէ յատակ,
Այս դառն վշտերուն, որոց յատակ,
Կ'ամփոփուի աճիւնս սեւ հողերու
տակ»:

Ահա՛ աչնիւ խոկումներու, բարձր
զգացումներու, նուիրական ձգտում-
ներու տաք ու ծաղկաւէտ կեանք մը,
որ թոքախափ ցուրտ շունչին տակ
խամբեցաւ ու անշնչացաւ, միշտ
ապրելով սակայն՝ մասնաւոր շրջա-
նակի մը մէջ՝ իւր համակրելի վար-
քովը, օրինակելի կեանքովը ու օգ-
տակէտ գործունէութիւնովը: Թող
միտիտարուին անոր բոլոր բարեկամ-
ները, որ Պ. Յովհաննէսի մահը այս
կեանքէն խալաւ անհետացում մի
չէ, այլ նա կ'ապրի ու պիտի ապրի՝
բեղուն յիշատակներով:

Ա Ձ Դ

«Տպարանական փոփոխութեան
պատճառով՝ «Անահիտ» ամսաթիւերի
Մարտի թիւը սովորականէն աւելի
ուշ պիտի երևայ. նոյն իսկ հաւանա-
կան է որ Մարտի և Ապրիլի թիւերը
միացեալ հրատարակուին»:
Ա. ՉՕՊԱՆԵԱՆ

ՆՊԱՐԱՎԱՅՈՒ

231 Իսթ 28րդ փողոցի նպարա-
վաճառի խանութի մէջ ի միջի այ-
լոց՝ կը վաճառեմ պտուղուր փափուր
4 սէնթի, ծեծած՝ 5 սէնթի և գառին
միս՝ 6 սէնթի փափուր:
ՄԵՍՐՈՊ ԳԱԶԱՆԻՍԻ (Բաւուրի)

ՀԱՅՈՒՍՏՆԻՑ ՊԱՏԵՆՏԻՆ ԼԱՅ
ԴԵՐՁԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Երկար տարիներէ ի վեր Հատուա-
ուած, ծանօթ ու շահող գերձակի
խանութ մը Պոսթըն Բօլըմպիւս ա-
վելիւր վրայ կը ծախուի 160 տղա-
րի: Եւ երբեքներ կրնան տեղեկու-
թիւն ստանալ վարդ-Մանուշակ ա-
նուն երեստարգէն, իսկ մանրամաս-
նութեանց համար գիմել առ:

Պ. Յակոբեան,
Ըսթէյըն Ա. Պաքս 5,
Պոսթըն Մասս.

ՊԱՏԵՆՏԻՆ ԳՈՐԾԱՌՈՐՈՒԹՅՆԷ
ՁԱՆՁՐՈՅՈՂԻ ՄԸ

Նպարավաճառի խանութի մէջ
հաւատարիմ ընկերի մը պէտք ու-
նիմ: Գինը աժան և տեղը յարմար է:
Տեղեկութեանց համար գիմել առ:
Մ. Կիրեղեան,
631 1րդ Ալիւ, Նիւ Եորք:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Գերորդ Տպագրութիւն

Մաքուէլ Սըմըրվու

Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծագիր հա-
տորներէ, որք կը վաճառուին բաժա-
նորագրութեամբ միայն:

Սոցա գինն է,


Կտակայ կազմ 62 տղ. 50 սէնթ
Կէս կաշիակազմ 87 " 50 "
Փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը գրկուի ա-
նոնց որք յանձն կառնեն վճարել ամի-
սը 2 տղար 50 սէնթ: Երկրորդին ամ-
սավճարն է 3 ու կէս տղար, իսկ վեր-
ջինին՝ 4 տղար:

Այս Համագիրտարանն Ամերիկեան
միակ արտօնեալ տպագրութիւնն է:
Մնացեալք անկապար են ամեն կերպով:
Մանրամասն և թեանց համար գի-
մել խմբագրութեան:

ՄԱՍՈՒ ԳՐԻՆԵՐ

Լրագրոյս խմբագրութիւնն Վենե-
տիկի Միթիլարեանց Տպարանին Հեռ-
մանուտ ար կարգադրութիւն մը լրաց-
է՝ նոյն տպարանէն ի լրաց ընծայուած
գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառ-
ութեան համար:
Ու է գիրք ստանալ փոփոքոյ-
նեքը կրնան գիմել մեղ անձամբ
կամ նամակով:



Սոյն Անգլիերէն Գործնական դաս-
գիրքը յատուկ գրպանը կրելու յարմար
չինուած լինելով՝ կը պարունակէ արհեստ-
ներու, գործիներու և պտուղներու ա-
նուններ, ընտանեկան և առևտրական խո-
սակցութիւններ, ու նաև 7,000 բառերով
հայերէնէ անգլիերէն և անգլիերէնէ հա-
յերէն բառարան մը:

Գին՝ միայն 50 սէնթ:

Մեծ քանակութեամբ գնողներու հա-
մար մասնաւոր գեղջ կը լինի: Կը վա-
ճառուի խմբագրութեան քով:

Հ Ի Գ Ր Օ Լ Ա

ՄԱՋԻ ԴԵՂ



HIRSOLO
A HAIR FOOD
FEEDS, STRENGTHENS,
CLEANS AND ADORN THE HAIR,
DESTROYS ALL DISEASES OF THE
SCALP AND REMOVES DANDRUFF.
IT NEVER FAILS!
Because it is not a mere mixture of oil
and sperin, but a selection of ingredients
of Oriental herbs, which select the dis-
eases of the scalp, and restores the
natural condition of the hair.
H. KOORIE & CO., New York.

Կը զօրացնէ, կը
մաքոյնէ, կը փայլե-
ցունէ մազերը ու
թափելը կը դադ-
րեցնէ: Կը բուժէ
նաև մորթի հիւան-
գութիւնն ու կը
մաքոյնէ թեփերը:
Միանգամ փոր-
ձել բաւական է սա-
ղեղին արժէքը
գիտնալու համար,
չը արեւելեան խոտե-
րէ պատրաստուած
է յոյժ հաճելի մի
հատով:

Կը ծախուի րո-
տըր գեղազործնե-
րուն քով:

Կին 50 Մէնթ միայն:
Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ
ընկերութեանէ:
Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարա-
կեանի քով, թիւ 45 Էքսթէնձ ըսթ-
րիթ, Ուսթըր, Մասս:

ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹԻՆ ԱՌՏԻՆ

Գրեց

Տքթ. Ն. Տալաւարեան

Կ. Պոլիս—Տպագրութիւն Պէրպէրեան
1898

Այս կարեւոր աշխատութիւնն կը
պարունակէ 510 երեսներ. յանձնա-
րարուած է Կեդրոնական վարչու-
թեան Ուսումնական խորհրդի կող-
մէն, ու գնահատուած է ազգային
ընդհանուր մամուլէն: Թանգարան
մը կատարեալ չէ առանց այս կա-
րեւոր հատորին:

Կը ծախուի խմբագրութեան քով:
Գին Մէկ Տղար միայն:

ՄԵՆՏՈՐ ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Գրեց

Տ. Մ. ՊէՏիպեան

Անգլիերէն սորվել ուզողներուն
համար խիստ օգտակար առաջնորդ
մէջ այս, որ կը պարունակէ շատ մը
կարեւոր գիտելիքներ ու համառօտ
բառարան մը: Գինն է միայն 50
սէնթ. կը ծախուի խմբագրութեան
քով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՐ

Ն ՊԱՐԱՎԱՃԱՌԱՌՈՒՍՈՒՆ

Ա. Գրուպըզեանի

Թիւ 313 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք
Պատիւ ունի ծանուցանել թէ սա-
խանութը բացուեցաւ շարժուած լճ-
տեղական և արևելեան ամէն տեսակ
նպարեղէններով: Ապրանայ թարմ
լինին ու գներու շարժարութեանը
ծանուցանելու համար կը հրաւիրուին
հայերն գէթ միանալով փորձել. մէկ
փորձը բաւական է յաճախորդը մը-
անջեանական ընելու:

Մէկ գին, աժան գին. քիչ շահ,
շատ առևտուր: Սա է մեր նշանարան:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹՈՒՎՄԱՍԵԱՆ ԵՒ
ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՄԱՍԵԱՆ

20½ Հրատըն փողոց, Պոսթըն, Մասս.
Միակ Հայ նպարավաճառ ի Պոսթըն
ի գիտութիւն Պոսթընի և շրջա-
կայի հայերուն կը յայտարարենք թէ
նպարեղէններու նոր խանութ մը բա-
ցած ենք, ուր կը գտնուի ամեն տե-
սակ ընտիր նպարեղէններ. օրինակ.
պտուղներ, ծեծած, սոսք, սխտու պա-
նայ, արևելեան ձեռով աղցուած սաւրճ
(խահուէ), խոյսերի պատրաստ, եսփ-
րախ ևայլն ևայլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարա-
րութիւնք փութով և ճշգրի կը կա-
տարուին՝ գոհացուցիչ գներով:
Փորձեցէք անգամ մը և գոհ պի-
տի մնալ:

Կը վաճառուին նաև Բաֆֆի գոր-
ծերը իրենց սովորական գներով:

12-4

ԱՊԱՀՈՎ ԵՒ ՓՈՒԹՈՎ

Ստակ կը փոխադրեմ Պոլիս ու
ուրիշ քաղաքներ. Պուրաբոյ ամեն
կողմերն, եգիպտոս, Գահրբէ և Ա-
ղէքսանդրիա՝ արտաքոյ կարգի գո-
հացուցիչ պայմաններով:

Դրամ զրկել ուզողներն եթէ ու-
րիշ մը երթալէ առաջ մեզ գան ան-
գամ մը՝ գոհ պիտի մնան ամեն կեր-
պով. մեր դրամ զրկելու միջոցը ա-
մենէ ապահով է ու կորուստի ա-
մեն վտանգներէ բացարձակապէս
հեռի: Դրմել առ
HAYG ASFAZADOUR,
209 East 43d St., N. Y. U. S. A.

ՄԱՋԻ ԴԵՂ



Պէտքոյդ հէր վիզոր մաքի գեղեցուն
թագարանն է. ա-
մէն տեսակ ուրբ մազերու
հիւանգութիւնն ունի, գործա-
ծելու եւ այլ դեղեր որ կը գործա-
ծեն կը անհրաժեշտ են և անհրաժեշտ
գոհացուցիչ գոհացում մը կը տայ
դոստոյնի: Գինն է 45 սէնթ և 50
սէնթ: Կարելի է ստանալ մեր
խմբագրութեան քով:

րանէն: Դուրսի քաղաքներէն կրնան
գիմել մեզ հայերէն գրուած նա-
մակաւ: —Թարմ գեղեր, շափաւոր
գներ: — ՈՒՆՏՍՐ ՏՐԸԿ ԸՍԹՈՐ,
Մաքս Հանսպրի
472 3րդ ալիւ, Նիւ Եորք:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212


ՄԵՐՄԱՐԱԿ (Հօրէյլ) ՎԱՃԱՌԱԿԱՆԻՐ

Արևելեան և Տաճկական Ապրանայ
Այս վաճառատունն իր տեսակին
մէջ ամենամեծն է ի Նիւ Եորք: Հոն
կը վաճառուին ամեն տեսակ ասեղ-
նագործներ, սեղանի, մէջքը, փի-
անոյի և մետաքսայ և ոսկեթել
ծածկոցներ, Դամասկոսի վարագոյր-
ներ, Բերիայի աղապանի, քէֆիա,
ևն. ևն.:

Հոյ վաճառականը կը հրաւիրուին
փորձել միանգամ: Ուրիշ քաղաքնե-
րէ եկող յանձնարարութիւնք փու-
թով և խնամօք կը կատարուին: Գը-
նիւն շափաւոր և ապրանքներն լա-
ւազոյն լինելով՝ ուրիշ ո՛ր է տուն
չէ կարող մրցիլ այս տան հետ:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրու-
ուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն
լիւրու առ ամեն տեսակ այցեատմոս,
նամակագրութիւն, հրատարակելի, շրջա-
բերականներ, տարականներ, շրջա-
պարտեզներ, Դամասկոսի վարագոյր-
ներ, Բերիայի աղապանի, քէֆիա,
ևն. ևն.:



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ


ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին
ամեն տեսակ կոշիկներ խիստ աժան
գներով: Մեր հայրենակիցներէ փորձ
մը միայն կը խնդրենք: Նոր ապար-
ուած կոշիկներ կը կարենք ձեռք
և վայելուչ կերպով: Կը նորոգենք հին
կոշիկներ շափաւոր գներով: Ուրիշ
մը երթալէ յառաջ ինձ եկէք ան-
գամ մը. և վստահ եղիք որ շատ
գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց
կրնանց կոշիկներ \$1.25է մինչև \$5.00
Կոշիկնայ \$1.25է " \$2.50
Տպարան և աղջը-
անց կոշիկներ \$0.50է " \$1.50

Ա. Բ. Ր. Ա. Ն. Ս. Մ. Ս. Ս. Ս. Ս.

Արտածիչ և ներածիչ Արևելեան
ամեն տեսակ ըմպելուց և գումա-
ղան նպարեղիցնայ:



Թիւ 92 Ուաշինկթըն փողոց
և 23 Բէքթըր փողոց, Նիւ Եորք:
Խմելը վստահար է թէ և, բայց դու ան
ու մաքուրը գործածելը օգտակար է:
Ումէ, գինի, օղի բայց քիչ,
և մաքուրը, գուր կամ հիշ:

Իմ Արևելքէ ընդլի տուած օղին ու
մասթիքան չի կրնար գերազանցուիլ,
զի մեր յատուկ գործարանի մէջ պատ-
րաստուած է՝ եղբորս անմիջական
հստակութեան տակ: Իմ հին ու նոր
գինիներ կրնան գոհ ընել ամեն օր:
Նպարեղէններու մէջ առաջնա-
կարգ տեղ մը կը բռնէ իմ վաճառա-
տուն: Իմ ներածիչ տուած ապրանք-
ներս սաւեղ կը հասնին Արևելքէն և
կը վաճառուին շուտով: Ունիմ ա-
մեն տեսակ արևելեան նպարեղէններ
շաքարեղէններ, զէյթուն, ձիթաբլիթ,
նէրկիլիէ և անոր յարակից պարա-
գանները, թրքական ծխախոտ, սիկը-
րէթ ևն. ևն.: Ոչ միայն մեր ապ-
րանքներն ընտիր են, այլ գներն հա-
մեմատարար գիւրամատչելի են ա-
մեն գասակարգի անձանց համար:

Մեր գրից ու անկից թուրքեան
վրայ գաղափար առնել ուզող նոր
յաճախորդներուն՝ կրնանք ծանօթ
հայերէ վկայութիւններ դրել:

Յանձնարարութիւնք դուրսի քա-
ղաքներէ ճշգրի կը կատարուին: Ա-
մեն հրամանի հետ միայն գէթ մէկ
տասնիորդ մասը գրկուելու է կան-
խիկ, իսկ մնացեալը Սի. Օ. Տի:

Կը վաճառուի նաև պուրլուր, ծե-
ծած, հալուէ, Փսթըք, լէպլէպի ևն.:

92 Washington St.

ԳՐԻԳՈՐ ՊՕՅԱՃԵԱ

Կոշկավաճառ և կոշկակար
Թիւ 248 Էսթ Ըսթրիտ, Փրօվիտէնս.
Սանութիւն մէջ կը վաճառուին ա-
մեն տեսակ նոս և հին կոշիկներ՝ ա-
ժան գներով: Կը նորոգենք հին կո-
շիկներ շափաւոր գներով: Արանց
հին կոշիկներու, ձեռքով կարուածի
համար, \$ 1.25, իսկ հատարակ կեր-
պով նորոգուածի ընդհանուր հին
կոշիկներու գներն 50—85 սէնթ են:
Վստահարար կրնան ըսել թէ մեր
յաճախող Հայրենակիցք միշտ գոհ
պիտի մնան՝ մեր արդէն ունեցած
յաճախորդաց նման: